# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 8(23), 30 հոկտեմբերի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ԱՄՓՈՓՎԵՑԻՆ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՎՈՐՈՂ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Հիմնավոր գիտելիքով դեպի արժանապատիվ ծառայություն». ՀՀ ոստիկանության կրթահամալիրի յուրաքանչյուր սովորող առաջնորդվում է այս կարգախոսով, և նրանց՝ կրթության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքը գնահատվում է Կրթահամալիրի ղեկավարության կողմից:

Համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 13.12.2018թ. թիվ 8 նիստում հաստատված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Լավագույն սովորող» մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի՝ պետ Տիգրան Եսայանը հայտարարեց մրցույթի հաղթողների անունները.

1. Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման երրորդ կուրսի երկրորդ դասակի սովորող Լիլիյա Հովակիմյան,

2. Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման չորրորդ կուրսի երկրորդ խմբի սովորող Դավիթ Խաչատրյան,

3. Քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի երկրորդ կուրսի սովորող Լիանա Հարությունյան:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,

սույն թվականի սեպտեմբերին իրականացվեց հիշյալ գործընթացը: Հարկ է նշել, որ «Լավագույն սովորող» մրցույթը Կրթահամալիրում անցկացվում էր առաջին անգամ, որը մեծ ոգևորություն էր առաջացրել քոլեջի և ակադեմիայի սովորողների շրջանում: Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար հիմունքներով սովորողներից, մրցույթի կանոնների համաձայն, դիմել էր չորս, վճարովի հիմունքներով սովորողներից՝ հինգ, քոլեջից՝ մեկ սովորող:

2019թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի շարահարապարակում հանդիսավոր արարողությամբ տեղի ունեցավ «Լավագույն սովորող» մրցույթի արդյունքների ամփոփումը:

Այսպես՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Ս.Սարգսյանը, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը հաղթող ճանաչված սովորողներին հանձնեց հուշամեդալներ՝ ողջույնի խոսք հղելով նրանց.

- Ձեզ համար սա լուրջ ձեռքբերում է, և փա՛ռք ձեզ, եթե պահպանեք այդ կոչումը, իսկ մյուս սովորողներին հորդորում եմ ջանասիրաբար սովորել և մյուս տարի նույնպես դառնալ լավագույններից մեկը:

Մրցույթի անցկացման հիմնական նպատակն է խրախուսել ուսման բարձր առաջադիմություն ունեցող և հասարակական ակտիվություն ցուցաբերած սովորողներին, որոնք ուսանողների շրջանում առաջադիմության բարելավման և հասարակական ակտիվության խթանման լավագույն օրինակ կծառայեն:

## ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԵՐԴՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի 106 սովորողներ երդվեցին հավատարիմ լինել սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել օրենքներով, պաշտպանել հայրենիքն ու օրինականությունը:

Երդման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Ա.Սարգսյանը, ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանը, Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը, Արմավիրի մարզպետ Հ. Մաթևոսյանը, քաղաքապետ Դ. Խուդաթյանը, Կրթահամալիրի ծառայողներն ու սովորողների հարազատները:

Նախքան հանդիսավոր արարողության մեկնարկը բարձրաստիճան սպաներն ու պաշտոնյաները ծաղիկներ խոնարհեցին Արցախյան ազատամարտում զոհված հերոսների և ▶ 2

## ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՎ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էր այցելել Երևանում պաշտոնական այցով գտնվող Վրաստանի խորհրդարանի գլխավոր քարտուղար Գիվի Միկանաձեն: Հյուրին դիմավորեց Կրթահամալիրի ղեկավարությունը՝ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում Կրթահամալիրի պետը բարձրաստիճան հյուրին ներկայացրեց Կրթահամալիրում վերջին շրջանում իրականացված փոփոխությունները, հետագա զարգացման ուղղությունները, ինչպես նաև կարևորեց ստեղծված գործընկերային և ընկերական հարաբերությունները, որոնք ձևավորվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի միջև Գիվի Միկանաձեի դեռևս պետ լինելու օրոք: Իր խոսքում Գիվի Միկանաձեն նշեց, որ Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի պետ եղած ժամանակվանից մշտապես հետևել է և այժմ էլ անտարբեր չէ Կրթահամալիրում ծավալվող գործընթացներին՝ ընդգծելով, որ պատրաստ է անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմանում օժանդակել գործընկեր կազմակերպությունների միջև հարաբերությունների զարգացմանը:

Կողմերը քննարկեցին երկուստեք հետաքրքրող մի շարք հարցեր և պատրաստակամություն հայտնեցին արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով հետագայում ևս շարունակել շփումը:

# ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՃԱՌԱՅԵԼՈՒ ԵՐԴՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ

1 ◀

Արամ Մանուկյանի հուշարձաններին:

ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարը կարևորեց օրվա խորհուրդը, ընդգծեց երդման հանդիսավոր արարողության անցկացման վայրի պատմական նշանակությունը, ապա շնորհավորեց սովորողներին ոստիկանական մեծ ընտանիքի շարքերը համալրելու կապակցությամբ:

-Ձեզ համար անկյունաքարային սկզբունք սահմանեք՝ գիտելիք և մարդկային որակ: Որպես կանոն՝ լավ մասնագետները նաև լավ մարդիկ են,- սովորողներին դիմեց ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարը՝ մեջ բերելով հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի խոսքերը. «Լավագույն կոչումը Մարդն է»:

Կրթահամալիրի սովորողների հանդիսավոր երթով ու ոստիկանության զորքերի պատվո պահակախմբի ցուցադրական ելույթով ամփոփվեց երդման արարողությունը:

# ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԷԻՆ ՌՈՒԲԵՆ ՄԻՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում շարունակվում են բուհ-հասարակություն կապի ամրապնդման և տարածման, Կրթահամալիրի վարկանիշի բարձրացման միջոցառումները: Նշված համատեքստում 2019թ. հոկտեմբերի 9-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրն հյուրընկալել էր Երևանի Ռուբեն Միրոյանի անվան թիվ 77 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի սաներին՝ դպրոցի ուսուցիչների և ծնողների ուղեկցությամբ:

Աշակերտներն ականատես եղան Կրթահամալիրի սովորողների առավոտյան ստուգատեսին, ներկա գտնվեցին ֆիզիկական պատրաստականության դասին:

Նրանք շրջայց կատարեցին Կրթահամալիրի տարածքում և տեսան Սովետական Միության հերոսների հուշապատը, Արցախյան հերոսամարտում և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված ոստիկանների, ցեղասպանության 100-ամյակին նվիրված հուշակոթողները և մատուռը:

Դպրոցականները եղան նաև ոստիկանության պատմության թանգարանում, ծանոթացան ցուցադրված պատմական ֆոնդերին և հայրենասիրական երգ երգեցին:

Այցի ավարտին հյուրերը վստահություն հայտնեցին, որ ապագայում նրանցից ոմանք կհամալրեն Կրթահամալիրի սովորողների շարքերը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավարության կողմից առանցքային ուշադրություն է դարձվում դպրոցների հետ համագործակցությանը, և այսուհետ կընդլայնվեն համագործակցության ուղիներն ու ձևերը՝ այդ գործընթացում ներառելով նաև ուսանողական խորհրդի անդամներին:

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՈՒ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՃՐԱԳՐԵՐԻՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կարևորվում է ծառայողների մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին ու դասընթացներին:

Սեպտեմբերի 15-ից 20-ը կրթահամալիրի քոլեջի ոստիկանության տակտիկական պատրաստականության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Դավիթ Օհանյանն այցելել էր Հունաստանի Հանրապետության Սալոնիկ քաղաք՝ մասնակցելու Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) կողմից կազմակերպված ռեզիդենտալ դասընթացին: Դասընթացի ժամանակ քննարկվել են ուսուցման նորագույն մեթոդների հնարքները, գնահատման մեխանիզմները, որի արդյունքում դասավանդման ժամանակակից մեթոդների ու եղանակների վերաբերյալ ձեռք բերված նոր գիտելիքները կներդրվեն ուսումնական գործընթացի մեջ:

Սեպտեմբերի 21-ից 25-ը վերապատրաստման մեկ այլ դասընթաց տեղի ունեցավ Բուլղարիայի Հանրապետության Սոֆիա քաղաքում: ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի ազգային ակադեմիայի ընկերակցության եվրոպական մասնաճյուղի 37-րդ վերապատրաստման դասընթացին մասնակցեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռուսլան Մարանդյանը: Դասընթացի շնորհիվ ձեռք բերվեցին նոր գիտելիքներ ԵՄ մի շարք գործակալությունների և մարմինների՝ միջազգային հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության և գործունեության առանձնահատկությունների, ինչպես նաև ահաբեկչության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և համացանցի միջոցով կատարվող հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ:

Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ Օմսկի ակադեմիայի կողմից կազմակերպված պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացին մասնակցելու համար սեպտեմբերի 26-ից 28-ը Ռուսաստանի Դաշնության Օմսկ քաղաք էին մեկնել կրթահամալիրի քոլեջի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ազատ Բաբախանյանը, ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Սեմերջյանն ու քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Արթուր Սարգսյանը: Դասընթացի մասնակիցները շրջայց կատարեցին ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայում, մասնակցեցին «ՌԴ և ՀՀ ներքին գործերի/ոստիկանության մարմինների գործունեության կազմակերպման և իրավական կարգավորման արդի հիմնախնդիրները» թեմայով համաժողովին, կլոր-սեղան քննարկման ձևաչափով հանդիպեցին Օմսկի ակադմիայի հոգեբանության, ՕՀԳ ամբիոնի մասնագետների հետ, անցկացրին համատեղ գիտահետազոտական աշխատանքներ՝ հետագայում դրանք տպագրելու նպատակով, փոխանակեցին վարչական գործունեության, ՕՀԳ և հոգեբանության ուսումնամեթոդական ծրագրեր ու գրականություն:

Չեխիայի Հանրապետության Պրահա և Հոլոշով քաղաքներում հոկտեմբերի 6-ից 11-ը Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) փոխանակման ծրագրին մասնակցեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը :

Փոխանակման ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել է Չեխիայի Հանրապետության ոստիկանության կրթական և ուսումնական վարչության գործունեությունը, իրականացվող ծրագրերը, ձեռք է բերվել նախնական համաձայնություն Չեխիայի և Հայաստանի ոստիկանական ուսումնական հաստատությունների անձնակազմի համար դասընթացներ իրականացնելու համար:

**Անի Ղուկասյան**
**ոստիկանության ավագ լեյտենանտ**

# «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ

Հայ-ֆրանսիական ոստիկանության տարեկան համագործակցության շրջանակներում ս.թ. հոկտեմբերի 14-ից 18-ը Հայաստանում էին Ֆրանսիայի ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության կենտրոնական վարչության քրեական հետախուզության բաժնի պետ, կոմիսար Գիյոմ Բարբագլին և Երևանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության ներքին անվտանգության հարցերով կցորդ Բրունո Բալդուկը (նստավայր ք. Թբիլիսի): Այցի նպատակն էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը» թեմայով դասընթացի անցկացումն ու փորձի փոխանակումը: Դասընթացին մասնակցում էին ՀՀ ոստիկանության տարբեր ստորոբաժանումների քրեական հետախուզության ծառայողներ:

Միջոցառման սկզբում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը, ողջունելով մասնակիցներին, ներկայացրեց բանախոսների անցած աշխատանքային ճանապարհը, զբաղեցրած պաշտոններն ու մասնագիտական որակները, ինչպես նաև կարևորեց եվրոպական երկրների հետ ոստիկանական համագործակցությունը՝ հույս հայտնելով, որ ձեռք բերված գիտելիքներն արդյունավետ ու կիրառելի կլինեն հետագա աշխատանքներում:

Դասախոսությունների ընթացքում ֆրանսիացի փորձագետները ներկայացրին Ֆրանսիայում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող աշխատանքները, գրանցված արդյունքները, իրականացված օպերատիվ միջոցառումները, ինչպես նաև ծանոթացրին Ֆրանսիայում իրագործվող հարցաքննության հատուկ մեթոդներին: Հայ գործընկերները ևս ներկայացան իրենց փորձով և գրանցված արդյունքներով:

Միջոցառման ավարտին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավարությունը՝ գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ, շնորհակալություն հայտնեց ֆրանսիացի փորձագետներին արդյունավետ համագործակցության համար, որից հետո մասնակիցներին հանձնվեցին վկայականներ, իսկ կոմիսար Գիյոմ Բարբագլին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և հավելեց, որ դասընթացը մասնագիտական գործունեության մեջ կիրառելու համար ոստիկաններին անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն ընձեռեց:

**Մ. Խ.**

# ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂԵՐԻ 10-ՐԴ ԽԱՂԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի 10-րդ հոբելյանական խաղաշրջանը, որին մասնակցեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողները և «Երևակ» Կրթահամալիրի ավագ դպրոցի աշակերտները:

ՀՀ ոստիկանության և «Երևակ» կրթահամալիրների սաներից կազմվել էին 4 խառը թիմեր, որոնք էլ վիճարկեցին լավագույնի կոչումը:

Երկրորդ տեղը գրաված «Արարատ» թիմի գիտակներին պարգևատրեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի տարբերանշանով հուշանվերներ:

Առաջին տեղը գրաված «Բազե» թիմի գիտակները պարգևատրվեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի «Ծխացող կարոտ» պատմվածքների ժողովածուով՝ հեղինակի մակագրությամբ: Այդ թիմի գիտակ, «Երևակ» Կրթահամալիրի աշակերտ Անահիտ Մանուկյանը պարգևատրվեց նաև ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հովհաննես Քոչարյանի կողմից սահմանված հատուկ մրցանակով՝ «Հայաստանի հրաշալիքները» հանրագիտարանով, իսկ թիմի ավագը՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի սովորող Ջիվան Հարությունյանը, ճանաչվեց լավագույն գիտակ և ստացավ գլխավոր մրցանակը՝ բրոնզափայլ բուն:

# Ի ՎԵՐՈՒՍՏ ԳՐՎԱԾ ԵՐԵՔ ՃԱԿԱՏԱԳԻՐ

**Պապը**

Գարուշ Բագրատի Ալեքսանյանը, որ շուրջ 22 տարի անմնացորդ նվիրումով ծառայել է Հայաստանի Ներքին գործերի նախարարության տարբեր ստորաբաժանումներում, ծնվել է 1922թ. մայիսի 9-ին, սակայն ի՞նչ իմանար հայ մանչուկը, որ տարիներ անց իր փառապանծ ժողովուրդն ամեն տարի այդ օրն ազգովի է նշելու որպես հաղթանակների եռատոն:

Ծանր ժամանակներ էին, ու դժվար մանկություն ու պատանեկություն ունեցավ սև աչքունքով Գարուշը, իսկ 1941-ին երիտասարդությունը բախվեց աշխարհացունց պատերազմին:

Գ. Ալեքսանյանի պատերազմական ոդիսականն սկսվել է 1941թ. և ավարտվել 1946թ. Եվրոպայում: Ազգի փառահեղ զավակը վերադարձավ պատերազմից՝ կուրծքը զարդարված մեդալներով և շքանշաններով: Ճանապարհի փոշին դեռ վրան, վառոդի հոտը ռունգերում՝ Գարուշն աշխատանքի անցավ Հայաստանի ՆԳՆ-ում, ապա ամուսնացավ, կազմեց գեղեցիկ ընտանիք, ունեցավ երեք որդի: Երջանիկ էր, շա՜տ երջանիկ, քանզի հարգված գործընկեր էր, սիրված ամուսին ու հայր:

1969թ. Գ. Ալեքսանյանն անցավ վաստակած հանգստի: Ծառայության ընթացքում շատ էր զբաղված, անցածը վերհիշելու, հանրագումարի բերելու ժամանակ չէր մնում, իսկ թոշակի անցնելուց հետո հաճախ էր մտովի թերթում իր կյանքի խունացող էջերն ու նորից վերապրում անցած-գնացածը:

Հիշում է՝ պատերազմ էր. ամեն ինչ ծածկված էր գորշությամբ, ծուխ ու մրով, ամենուր փլատակներ էին, շարքից դուրս եկած մարտական տեխնիկա, իսկ վաշտն օրուգիշեր քայլում էր, շարժվում էր դեպի Լայպցիգ: Շրջապատում աչք շոյող, հոգի թովող որևէ բան չկար: Կային քայլելուց հոգնած և ընդարմացած ոտքեր, ոչինչ չարտահայտող հայացքներ, անսահման կարոտ և քայլող զինվորների՝ ռմբակոծություններից փշաքաղած օդում արձագանքվող ոտնաձայների միալար «սիմֆոնիա»: Ու հանկարծ այդ տխուր «սիմֆոնիան» խլացավ մոտակա սյան բարձրախոսից հնչող հոգեպարար երաժշտության հնչյուններից: «Ճամփորդ եմ, ջանիդ ղուրբան...»,- երգում էր Արաքսյա Գյուլզադյանը, և երգը թևածում էր փոշոտ ճամփաների, հոգնած զինվորների՝ պատերազմից կոշտացած հոգիների վրա: Ինքն ակամայից կանգ առավ սյան տակ՝ ինքնաձիգն ամուր սեղմած կրծքին, հայացքը հառեց սյունից կախված բարձրախոսին, իսկ արցունքները գլուր-գլուր հորդեցին ու գնալով վարարեցին: Երգն ավարտվեց, սակայն երկար ժամանակ տեղից չկարողացավ շարժվել: Ինչքան մնաց քարացած՝ չէր հիշում, բայց երբ ուշքի եկավ, նկատեց, որ վաշտը ևս համրացած նայում է բարձրախոսին...

-Կարծես տնից լուր ստացա,- ասաց կողքով քայլող ռուս զինվորը և շարունակեց. –չնայած չհասկացա՝ ինչի մասին էր երգը:

**Հայրը**

Գարուշ Ալեքսանյանի երեք որդիներից միայն Անդրանիկը շարունակեց հոր գործը: Սովետական բանակից 1974թ. զորացրվեց ու անմիջապես աշխատանքի անցավ Հայաստանի ներքին գործերի նախարարությունում: Երիտասարդ միլիցիոները մեկ տարի ծառայելուց հետո՝ 1976 թվականին, ընդունվեց Երևանի միլիցիայի բարձրագույն դպրոց, իսկ 1978-ին ավարտեց և ծառայության անցավ Սպանդարյանի շրջանի միլիցիայի բաժնում:

Միլիցիայի պատվախնդիր գնդապետ Ա. Ալեքսանյանը 40 երկար ու ճիգ տարիներ, հավատարիմ հայ իրավապահի երդմանը, միլիցիայի տարբեր ստորաբաժանումներում պայքարեց հանցավորության դեմ և վաստակած մարդու իրավունքով 2011թ. անցավ թոշակի:

Ա. Ալեքսանյանը երկու դստեր հայր է: Նա գուցեև թաքուն երազել է որդի ունենալու մասին, սակայն երբեք չի բարձրաձայնել ու չի տրտնջացել: Տաք օջախը, սիրող կինը, աշխույժ ու կենսախիզդ աղջիկներն ուժ ու եռանդ են տվել գործի նվիրյալ միլիցիոներին:

Երբ տարիներ անց Նոնան հայրիկին հայտնեց ոստիկան դառնալու մտադրության մասին, հայրը հուզվեց մի պահ, աչքերը թեթևակի տամկացան, բայց անակնկալի չեկավ: «Դե ի՞նչ, առյուծն առյուծ է, էգ լինի, թե որձ: Կարևորը ցանկությունն է ու նվիրումը»,- մտածեց հայրը և տվեց իր հայրական օրհնությունը:

**Նոնան**

Ծնվել է 1984թ., 2008 թվականից է ծառայում ՀՀ ոստիկանությունում, իսկ 2012 թվականից աշխատում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում, ՀԿՀ ավագ տեսուչ է, կոչումով՝ ոստիկանության մայոր:

Նոնան՝ որպես մարդ, բարեսիրտ է, ազնիվ, ժպտերես, իսկ որպես ծառայող՝ աշխատասեր է, կարգապահ և սկզբունքային: Լավ ծառայության համար նա բազմիցս արժանացել է խրախուսանքների: Համազգեստի նկատմամբ սերը դեռ մանկուց էր ձևավորվել: Գուցե հենց դա էր պատճառը, որ հետագայում կյանքը կապեց ոստիկանի հետ: Այժմ այդ գեղեցիկ ու ներդաշնակ ընտանիքում է դաստիարակվում Նոնայի և Հայկի դուստրը, գուցե նաև Հայաստանի Հանրապետության վաղվա նվիրյալ ոստիկանը:

Ապրենք և հուսանք:

**Ռ. Մուսաելյան**
**ոստիկանության գնդապետ**

# ՄՐՑՈՒՅԹ-ԴԱՏԱԽԱՂ՝ ՆՎԻՐՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը, պահպանելով ուսանողների շրջանում գիտագործնական աշխատանքներ կատարելու լավագույն պրակտիկան, այս անգամ Կրթահամալիրի սովորողներից կազմված թիմերով ներկայացավ մրցույթ-դատախաղի:

Հարկ է նշել, որ Կրթահամալիրը 2019 թվականի սեպտեմբերին մասնակցության հայտ էր ներկայացրել Միջազգային համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպվող՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված մրցույթ-դատախաղին:

Դատախաղի գրավոր փուլին մասնակցեցին նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Օրենքի պատվար» և «Ֆեմիդա» թիմերը: Թիմերի կազմում ընդգրկված էին Կրթահամալիրի իրավաբանական կլինիկայում ուսուցում անցնող սովորողները՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողներ Սերգեյ Բադալյանը, Գարիկ Շառոյանը, Միլենա Մկրտչյանը, Վարդանուշ Մակարյանը և իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման 4-րդ կուրսի սովորողներ Սիրանուշ Դավթյանը, Նարինե Ասրիյանը, Սարո Վարդանյանը և Ռուզան Մայիլյանը:

«Օրենքի պատվար» թիմի մարզիչն էր քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը, իսկ «Ֆեմիդա» թիմի մարզիչը՝ իրավաբանական կլինիկայի ղեկավար, պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր Լալա Գրիգորյանը:

Գրավոր փուլին մասնակցած 8 թիմերից լավագույն 6-ը, այդ թվում Կրթահամալիրի երկու թիմերն անցել էին դատախաղի բանավոր փուլ: Բանավոր փուլն անցկացվեց հոկտեմբերի 4-ից 6-ը Աղվերանում: Դատախաղի բանավոր փուլում հաղթող ճանաչվեց Երևանի պետական համալսարանի թիմը:

# ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

**2019** թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ մինի ֆուտբոլի առաջնություն՝ ի հիշատակ ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու Վարդան Պետրոսյանի: Մինչ եզրափակիչ խաղն ընկերական հանդիպում տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սպայական կազմի և Վարդան Պետրոսյանի ընկերներից կազմված հավաքականների միջև: Հանդիպումը լարված էր և դիտարժան: Հաղթեց Վ.Պետրոսյանի ընկերների թիմը:

Այնուհետև տեղի ունեցավ հուշամրցաշարի եզրափակիչ խաղը: Եզրափակչում միմյանց հետ հանդիպեցին Կրթահամալիրի ակադեմիայի 4-րդ կուրսի և քոլեջի 2-րդ կուրսի սովորողների թիմերը: Երկու թիմերն էլ մարտական էին տրամադրված: Վերջին րոպեին քոլեջի թիմը կարողացավ խփել հաղթական գոլը և տիրանալ փոխանցիկ գավաթին:

Հաղթող թիմին պարգևատրեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, գործարար, Կրթահամալիրի բարեկամ-բարերար Ա. Թովմասյանը, Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանն ու մարտական և ֆիզիկական պատրաստականության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Գրիգորյանը:

# ՆՇՈՒՄ ԵՆՔ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԸ

1794 թվականի հոկտեմբերի 16-ին հրատարակվեց հայկական առաջին «Ազդարար» տպագիր պարբերականը:

Պատահական չէ, որ հենց այս օրն էլ ՀՀ-ում կառավարության 2004թ. ապրիլի 22-ի որոշմամբ հոկտեմբերի 16-ը նշվում է որպես Հայ մամուլի օր:

«Ազդարարը» հիմնադրվել է Մադրասում 1794 թվականի հոկտեմբերի 14-ին: Պարբերականի հիմնադիրը Հարություն Շմավոնյանն է: Մեծ մտավորականը ծնվել է Պարսկաստանի Շիրազ քաղաքում: Սովորել է ծննդավայրում, քահանա ձեռնադրվել Ամենափրկիչ վանքում: Մինչև 1777թ. պաշտոնավարել է Շիրազում: 1777-1784թթ. անցել է մենակեցության, ինքնուրույն ուսումնասիրել պարսկերեն, արաբերեն, գրականություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն, սովորել արհեստներ: 1784թ. որպես ավագ քահանա՝ ուղարկվել է Մադրաս: Տեղի հայությանը ծանոթացրել է բրուտագործությանը, ձիթհանությանը և այլ արհեստների: 1789թ. հիմնադրել է Մադրասի երկրորդ հայկական տպարանը, իսկ 1794թ.՝ «Ազդարարը»: 1809 թվականից տպարանը հանձնել է իր աշակերտներին, ամբողջապես նվիրվել գաղութի հասարակական-լուսավորչական կյանքին: Ունեցել է ընդգծված ռուսական կողմնորոշում, սերտ կապերի մեջ է եղել Ռուսաստանի և Հայաստանի առաջադեմ շրջանների հետ, հանգանակություններ կազմակերպել՝ ի նպաստ կրթական ու մշակութային գործի:

«Ազդարար» տպագիր պարբերականը գործել է մինչև 1796 թվականի մարտը: Այդ ընթացքում հրատարակել է 18 համար: Լուրերից բացի պարբերականում տպագրվում էին նաև գեղարվեստական ստեղծագործություններ, թարգմանություններ և պատմական աշխատություններ:

Շնորհավոր ծնունդդ, հա՛յ մամուլ…

## Հետաքրքիր փաստեր

Աշխարհում ոստիկաններն ամենաշատը ժողովրդականություն են վայելում Ֆինլանդիայում: Համաձայն հարցումների՝ նրանց վստահում է բնակչության 90 տոկոսից ավելին:

* Հնդկաստանում և Նեապոլում հաճախ կարելի է տեսնել շատ տարօրինակ տեսարան. երկու տղամարդ ոստիկան քայլում են և հասարակական կարգը հսկում ձեռք ձեռքի: Դրանում ոչ ավանդական սեռական կողմնորոշման մասին խոսք լինել չի կարող, քանի որ այդ երկրներում ընդունված է այդպիսի վարվելաձև, որը խոսում է մարդկանց միջև իսկական բարեկամության և ընկերության մասին:
* ԱՄՆ-ում միացյալ ոստիկանական համակարգ գոյություն չունի, որովհետև ամեն նահանգ ունի իր սեփականը՝ անկախ ոստիկանական բաժիններով: Նրանց կազմակերպչական համակարգը կարող է մյուսներից տարբեր լինել և կառավարվել տեղական օրենսդրությամբ: ԱՄՆ-ում առաջին կին ոստիկանն աշխատանքի է ընդունվել 1891թ. Չիկագոյի ոստիկանական վարչությունում:
* Ամերիկայում անհնար է կոչում վաստակել՝ տարիներ շարունակ ծառայելով: Նոր կոչում շնորհվում է ոչ թե վաստակած տարիների քանակով, այլ մասնագիտական հաջողությունների համար: Հետաքրքիր է, որ ոստիկանության այլ բաժանմունք տեղափոխվելիս կոչումը չի պահպանվում. նոր աշխատավայրում նա նորից ստիպված է աշխատել ամենացածր կոչումով՝ «սպա» կամ «դետեկտիվ»:
* Ամենից շատ կին ոստիկան կա Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Նրանք կազմում են ընդհանուր ոստիկանության 29 տոկոսը:
* Հայերեն ոստիկան բառն առաջացել է «ոստանիկ» բառից, որը նշանակում է մայրաքաղաք, արքայանիստ քաղաք: Ի սկզբանե այն եղել է «ոստանիկ», ապա հնչյունափոխության արդյունքում դարձել է «ոստիկան»: Ոստանիկները միջնադարում իրականացրել են կուսակալի գործառույթներ: Հայաստանում ոստիկանությունը՝ որպես պետական կառույց, իր գործունեությունն սկսել է Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից ի վեր, որտեղ Ներքին գործերի առաջին նախարարը Արամ Մանուկյանն էր:

## ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Արժանապատվությունն ու պատասխանատվությունն ուժեղ մարդկանց գլխավոր արժեքն են, գոռոզությունն ու անպատասխանատվությունը՝ թույլերի հենարանը: Յուրաքանչյուր մարդ պետք է պատասխանատվություն կրի իր քայլերի, իր խոսքի ու մտքի համար: Երբ մարդիկ անպատասխանատու են իրենց քայլերում, արժանապատվությունը կախում են անզորության պարանից, հագնում են գունավոր դիմակներ: Իսկ քանի որ մարդկանց բնորոշ է խորհուրդներ տալ դույլերով, սակայն ընդունել կաթիլ-կաթիլ, ուշացումով գիտակցում են ու փորձում վերակենդանացնել, վերագտնել արժեքներ, որոնք հասու չէին իրենց: Արդյո՞ք վերագտնում են նրանք իրենց արժանապատվությունն ու պատիվը. դժվար է ասել:

Մարդուն պատիվ են բերում իր գիտակցված քայլերն ու նպատակներին հասնելու ընտրած ճիշտ ուղին: Նշանակություն չունի, թե նա քանի անգամ է սայթաքել կամ խարխափել անորոշության բավիղներում կամ լռել է, երբ հարկ է եղել, բղավել է անզուսպ ու թափահարել է ձեռքը, ընկել է, բայց ինքնուրույն ոտքի է կանգնել:

Պատասխանատվություն, արժանապատվություն, հայրենասիրություն, ողջամտություն. ահա՛ այն արժեքները, որոնք անքակտելի են մեր աշխարհընկալման ու որպես անհատ կայանալու մեջ: Մենք այժմ ընտրել ենք մի ուղի, որտեղ պատասխանատու ենք ոչ միայն մեր, այլ նաև այլ մարդկանց համար: Մեր քայլերը պետք է պատիվ բերեն ոչ միայն մեզ, այլ նաև ողջ համակարգին:

**Պայծառ Բաղալյան**
**քոլեջի առաջին կուրսի սովորող,**
**ոստիկանության**
**կրտսեր սերժանտ**

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

### ՆԵՐՈՒՄ

Ես ձեզ ներում եմ, քանզի չգիտեք, թե ինչ եք անում,
Քանզի չգիտեք, որ նյութի մահվամբ Մեծ Ոգեղենը դեռ չի մահանում,
Ես ձեզ ներում եմ մահկանացուի ձեր խղճուկ բեռը քարշ տալու համար,
Որ անհաղորդ եք Լույսին արարող, Հույսին, Հավատին և Սիրուն անմար:

Ես ձեզ ներում եմ հանուն ոչնչի քանդած բույները
Ե՛վ առանց թախիծ, և՛ առանց հորդում հրաժեշտը ձեր,
Ես ձեզ ներում եմ կյանքիս կտավի բոլոր գույները,
Որ ձեր գիշերում չդարձան երբեք կանչող փարոսներ:

Ես ձեզ ներում եմ իմ մենությունը ձեր բազմության մեջ
Եվ իմ աչքերից հանուն ձեզ թափված հավատն ու հույսը,
Ես ձեզ ներում եմ երբևէ մարած կրակներն անշեջ
Եվ ձեր աչքերի խավարից տանջված աչքերիս լույսը:

Ես ձեզ ներում եմ երկրային նյութից հյուսված երգերը
Եվ իբրև վկա՝ մեկնում եմ ահա ձեռքս հաշտության,
Ես ձեզ ներում եմ իմ խոցված սրտի բոլոր վերքերը
Եվ ողջ նողկանքը ձեր անդիմագիծ երեսպաշտության:

Ես ձեզ ներում եմ, բայց ձեզ չեմ բերի
Հոգու փրկություն՝ Դատաստանից Մեծ,
Թող, որ հենց ինքը՝ Անհուն Երկինքը, ձեր մեղքը ների,
Անհուն Երկինքը, որը մեկ անգամ ձեր մեղքը ներեց…

**Ռուսլան Մարանդյան**
**իրավագիտության ֆակուլտետի պետ,**
**ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ.**

## ՈՒՐՎԱԳԾՎՈՂ ԱՂՈԹՔ

Լուցկու թույլ բոցը կպավ մեղրամոմի թել-քթին, և նրա տաք համբույրից վառվեց մոմը՝ մեղմ ու խորհրդավոր մի ստվեր նետելով դիմացի պատի սրբապատկերներին: Դողդոջուն ափերն իրար միացան, իսկ միմյանց ջերմացնող տաք շրթունքները թրթռալ սկսեցին: Մոմի լույսը նազանքով մեկ աջ թեքվեց, մեկ՝ ձախ, մերթ բարակեց ու ձգվեց վեր, մերթ խեղճացավ, կարճացավ և թեթև ծուխ արձակեց: Շուրթերը թրթռացին անձայն, անծպտուն, ու մոմը «կարդաց» թրթռոցը, իսկ «արցունքները» դանդաղ, գլուր-գլուր սահեցին մոմն ի վայր: Մի զույգ տամուկ աչքեր լուռ ակնդրեցին մոմալացը և ի զորու չեղան սրբելու անհագուրդ սահող «արցունքները»: Ծանրացած կոպերը փակվեցին, շուրթերը կոկոնվեցին, դողդոջ մատները հեռացան միմյանցից, ինչպես երկու ճերմակաթև աղավնիներ քաղցր գուրգուրանքից հետո: Աչքերը բացվեցին զգուշորեն. սրբապատկերները կիսախավարի մեջ են՝ ծխի մեղմ շղարշով պարուրված, իսկ հոգեվարք ապրող մոմի «արցունքները» մի լուռ աղոթք ուրվագծեցին ջրախառն ավազի վրա:

**Ռ. Մ.**

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 10. 2019թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: